

# **ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

## **ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՅԱՍ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ**

### **ԼԻԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ**

Անչափահաս դատապարտյալների ուղղման միջոցառումներն ընդունված է ներառել անչափահաս դատապարտյալների անհատական ծրագրում, որտեղ էական դերակատարություն ունեն կրթությունը (ուսումը) և աշխատանքը: Բազմաթիվ գիտնականների կողմից տարբեր տեսակետներ են արտահայտվել անչափահաս դատապարտյալների աշխատանքի պարտադիր կամ ոչ պարտադիր բնույթի, ինչպես նաև կրթության և աշխատանքի համատեղման վերաբերյալ<sup>1</sup>: Ավելին՝ դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքը վերջին տարիներին սուր քննադատության է արժանանում մի շարք եվրոպական երկրներում այն պատճառաբանությամբ, որ «այն իր ձևով հազիվ թե արդարացնում կամ համապատասխանում է դատապարտյալի վերասոցիալականացման նպատակին»<sup>2</sup>: Նման մոտեցման պատճառ հանդիսացող գործոններն են՝ աշխատատեղերի պակասը, աշխատանքի միապաղաղ, ոչ մի մասնագիտացում չպահանջող բնույթը և այլն:

Այս տեսակետը միանշանակ չէ, քանի որ, օրինակ, գերմանացի մի շարք փորձագետներ քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի կողմից կատարվող աշխատանքը դիտում են որպես ազատվելուց հետո դատապարտյալի վերասոցիալականացման կարևորագույն պայման, պատիժը կրելուց հետո որոշակի նյութական միջոցներ ունենալու, ինչպես նաև որոշակի արհեստների մեջ հմտանալու հնարավորություն<sup>3</sup>: Անչափահաս դատապարտյալների կողմից քրեակատարողական հիմնարկներում կատարվող աշխատանքի ջատագով փորձագետները այն հիմնավորում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում առկա այն դրույթով, համաձայն որի՝ «ԳԴՀ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալի աշխատավարձից պահումներ են կատարվում, ազատ արձակելուց հետո այն դատապարտյալին վերադարձնելու նպատակով»<sup>4</sup>:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 85-90 հոդվածները կարգավորում են դատապարտյալի աշխատանքին և ուսմանը վերաբերող հասա-

<sup>1</sup> Տե՛ս **Stephan Schwirzer**, *Jugendstrafvollzug für das 21. Jahrhundert?*, Frankfurt am Main, 2006, էջ 194:

<sup>2</sup> <http://www.direkteaktion.org/197/arbeitszwang-im-strafvollzug>:

<sup>3</sup> Տե՛ս [https://www.ag.ch/de/dvi/strafverfolgung\\_strafvollzug/jva\\_lenzburg/betriebe/arbeit\\_im\\_strafvollzug/arbeit\\_im\\_strafvollzug\\_1.jsp](https://www.ag.ch/de/dvi/strafverfolgung_strafvollzug/jva_lenzburg/betriebe/arbeit_im_strafvollzug/arbeit_im_strafvollzug_1.jsp):

<sup>4</sup> Տե՛ս **Stephan Schwirzer**, *Jugendstrafvollzug für das 21. Jahrhundert?*, Frankfurt am Main, 2006, էջ 211:

րակական հարաբերությունները (ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս դատապարտյալների կողմից ուղղիչ հիմնարկներում կատարվող աշխատանքը և նրանց կրթության կազմակերպումը):

ԳԴՀ անչափահասների քրեակատարողական օրենսգիրքը անչափահաս դատապարտյալների աշխատանքը նախատեսում է ոչ թե որպես իրավունք, այլ պարտականություն: ԳԴՀ Բրեմեն երկրամասի անչափահասների քրեակատարողական օրենսգրքի 37 հոդվածի 2-րդ մասում մասնավորապես ասվում է. «Դատապարտյալը պարտավոր է աշխատել այնքանով, որքանով նա ի վիճակի է»<sup>5</sup>: ԳԴՀ երկրամասերում ընդունված անչափահասների քրեակատարողական օրենսգրքերում անչափահաս դատապարտյալներին աշխատանքի ներգրավելը, նրանց ուսումը և վերապատրաստումը կոչված են նպաստելու պատժի նպատակների իրականացման ապահովմանը, ինչով էլ արդարացվում է աշխատանքը և ուսումը որպես պարտականություն նախատեսելը:

Իսկ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Ուսման, վերապատրաստման, աշխատանքի նպատակը դատապարտյալի մեջ աշխատանքային ունակություններ, հմտություններ զարգացնելն ու ձեռք բերելն է, որոնք նա կարող է կիրառել ազատ արձակվելուց հետո աշխատանքի ընդունվելիս»:

Աշխատանքի ներգրավելու պարտադիր բնույթը քրեակատարողական իրավունքի տեսության մեջ պատճառաբանվում և հիմնավորվում է նաև այլ հիմքերով: Թոբիաս Մերքլեն մասնավորապես նշում է, որ աշխատանքը կարևորվում է նաև անչափահաս դատապարտյալներին միմյանց հետ միավորելու գործում: Բացի այդ, աշխատանքը այն գործոններից մեկն է, որն անչափահաս դատապարտյալներին օգնում է կրկին ինտեգրվելու հասարակությանը: Ինչպես ցույց են տալիս վերջինիս կողմից կատարած հետազոտության տվյալները, անչափահաս դատապարտյալների 70-80%-ը կրկին դատապարտվում է, իսկ 15-20 տարեկանների մեջ այդ ցուցանիշը անգամ հասնում է 90 %-ի: Այստեղ է, որ բացահայտվում է գործազրկության և հանցավորության միջև առկա կապը<sup>6</sup>: Ավստրիայում կատարած հետազոտությամբ Համներշիքը բացահայտեց, որ անչափահաս դատապարտյալների 39%-ը մինչև դատապարտվելը 4 տարի շարունակ եղել է գործազուրկ, 48%-ի շրջանում այդ ցուցանիշը չի գերազանցել մեկ տարին, իսկ 80%-ի շրջանում մշտական զբաղվածություն չի եղել<sup>7</sup>: Սակայն վերասոցիալականացման նպատակի իրականացումը հնարավոր չէ ապահովել միայն աշխատանքի միջոցով: Արևմտյան գիտնականները կարևորում են նաև կրթությունը, որն աշխատանքի հետ համատեղ կօգնի ինտեգրման նպատակի իրականացմանը<sup>8</sup>:

Անչափահաս դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացում աշխատանքի և ուսման համատեղման լավագույն օրինակ է

<sup>5</sup> <http://www.dvjj.de/download.php?id=1494>:

<sup>6</sup> Տե՛ս **Tobias Merckle**, Arbeit und Strafvollzug – und danach?, 2000, Ձեկույց:

<sup>7</sup> Տե՛ս Arbeit im Strafvollzug : Rechtslage und Realität im europäischen Vergleich - Work in prison: a European comparison of the legal situation and reality, Hammerschick, Walter, Köln, 2000, էջ 56:

<sup>8</sup> Տե՛ս **Heribert Ostendorf**, Jugendstrafvollzugsrecht, Kiel, 2009, էջ 250-255:

տալիս ԱՄՆ Փենսիլվանիա նահանգում գտնվող Գլեն Միլլս քրեակատարողական հիմնարկը: Այն աչքի է ընկնում բարձր որակավորում ունեցող մասնագետներով, անգամ սպորտի բնագավառում բարձր պատրաստվածությամբ մարզիչներով: Աշխատանքի կազմակերպվածության բարձր մակարդակը և հարմարավետ աշխատանքային մթնոլորտի ապահովումը այս հիմնարկում բոլոր դատապարտյալների համար աշխատանքը մոտիվացնող լավագույն միջոց են: Գլեն Միլլս քրեակատարողական հիմնարկից ազատված դատապարտյալների շրջանում ռեցիդիվը կազմում է ընդամենը 39%, ինչն ամբողջ աշխարհում համարվում է շատ ցածր ցուցանիշ<sup>9</sup>: Գլեն Միլլսի օրինակով այժմ քրեակատարողական հիմնարկ է կառուցվում նաև Նիդերլանդներում:

Աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար կարևորվում է քրեակատարողական հիմնարկների ենթամշակույթը: Մասնավորապես, անչափահասների քրեակատարողական հիմնարկում խստորեն դատապարտվում է անչափահաս դատապարտյալների հետ բռնության կամ ուժի լեզվով խոսելը: Աշխարհում շատ հաջողված է «Buddy system» մեթոդը, որի էությունն այն է, որ ավելի վաղ դատապարտված անձը պատասխանատու է նոր դատապարտված անչափահասի համար ինչպես ուսման, այնպես էլ աշխատանքային հարաբերություններում: Նա փոխանցում է իր փորձը և նոր դատապարտված անձի մեջ նվազեցնում, հնարավորինս չեզոքացնում է նորեկի՝ անծանոթ միջավայրում գտնվելու, իրեն մեկուսացված զգալու զգացումները, օգնում նրան ավելի արագ ինտեգրվելու հիմնարկի ենթամշակույթին:

Կարևորելով աշխատանքի դերը՝ ԳԴՀ անչափահասների քրեակատարողական օրենսգրքերը առաջնությունը նախ տալիս են կրթությանը, ապա աշխատանքին: Սակայն «ոսկե միջին» է համարվում երկուսի համատեղումը: ԳԴՀ Բրենեն երկրամասի անչափահասների քրեակատարողական օրենսգրքի 37 հոդվածի երկրորդ մասով նախատեսված է, որ «անչափահաս դատապարտյալները նախ և առաջ պարտավորվում են մասնակցելու դպրոցական, մասնագիտական ուսմանը կամ վերապատրաստմանը, ինչը նպաստում է վերջիններիս ինքնազարգացմանը»<sup>10</sup>:

Աշխատանքի և կրթության լավագույն միաձուլում է համարվում նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթությունը և աշխատանքը արհեստագործական սրահներում: Գերմանիայում՝ Ֆրայբուրգում, Բրենենում տեխնիկական միջոցներով գերհագեցած արհեստագործական սրահներում անչափահաս դատապարտյալները ոչ միայն հնարավորություն ունեն սովորելու արհեստ, այլև լավագույնները վճարովի հիմքունքներով իրականացնում են պատվերներ:

Ի տարբերություն ԳԴՀ քրեակատարողական օրենսգրքի, որն աշխատանքը դիտում է որպես անչափահաս դատապարտյալի պարտականություն, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը հստակ չի նախանշում աշ-

<sup>9</sup> **Steu Guder P.**, Ohne Schloss und Riiegel – Eine offene Alternative auch für den Umgang mit deutschen jugendlichen aggressiven Mehrfachtätern zwischen Jugendhilfe und Justiz? In: DVVJ-Journal 2/1997, էջ 123-136:

<sup>10</sup> <http://www.dvjj.de/download.php?id=1494>:

խատանքի պարտադիր բնույթը: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 85 հոդվածի 1-ին մասում նշված է. «Դատապարտյալը հնարավորության դեպքում ապահովվում է աշխատանքով, կամ նրան իրավունք է վերապահվում ինքնուրույն իրեն ապահովելու աշխատանքով, որի կարգը և պայմանները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով»: Ի դեպ, եթե ԳԴՀ երկրամասերի քրեակատարողական օրենսդրությունը անչափահասների քրեակատարողական օրենսգրքերում մանրամասն կարգավորում է անչափահասների աշխատանքը, ապա ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը անչափահասների կողմից կատարվող աշխատանքի հատուկ կարգավորում չի նախատեսում: Ավելին, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը նախատեսում է դատապարտյալի կողմից իր համաձայնությամբ նաև չվարձատրվող աշխատանքի ներգրավելու դեպքեր: Ի հակադրություն այս դրույթի, ԳԴՀ-ում անչափահաս դատապարտյալները անգամ կրթության համար նպաստ են ստանում: Աշխատանքի և կրթություն ստանալու դիմաց տրվող վարձատրությունը (նպաստը) յուրովի կարգավորված է ԳԴՀ Բրեմենի երկրամասի անչափահասների քրեակատարողական օրենսգրքի 57 հոդվածի առաջին մասում. «Եթե անչափահաս դատապարտյալն ազատված է աշխատանքից ուսման նպատակով, ապա նա ստանում է համապատասխան կրթական դրամական նպաստ»: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է. «Այն դատապարտյալը, ով աշխատում է, ստանում է աշխատավարձ»: Ընդ որում, Պերմանիայում դատապարտյալի կողմից կատարվող աշխատանքի դիմաց տրվող վարձատրությունը, ինչպես նաև կրթության համար տրվող նպաստը կարող է հաշվվել ինչպես ըստ ժամերի, այնպես էլ ըստ կատարված աշխատանքի կամ համապատասխանաբար՝ կրթության (ուսման) տեսակի: Այս դրույթն ունի կարևոր նոտիվացիոն նշանակություն և հանգեցնում է պատժի նպատակների իրականացմանը: Նման դրույթներ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, ցավոք, բացակայում են, մինչդեռ դրա առկայությունը կնպաստեր դատապարտյալների հետ տարվող աշխատանքների արդյունավետությանը: Ավելին, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է չվարձատրվող աշխատանքից ազատելու դեպքերը. «Առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ, հղի, կենսաթոշակային տարիքի հասած դատապարտյալին չվարձատրվող աշխատանքների ներգրավելն արգելվում է»: Իսկ ԳԴՀ-ում օրենսդրությամբ կարգավորված է նաև անչափահաս դատապարտյալների հանգստի իրավունքը: ԳԴՀ Բրեմենի անչափահասների քրեակատարողական օրենսգրքի 37 հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ դատապարտյալը մեկ տարվա ընթացքում 18 աշխատանքային օր աշխատանքից ազատվելու իրավունք ունի, իսկ հիվանդության դեպքում՝ 6 շաբաթ չաշխատելու իրավունք: Ի դեպ՝ այս երկու դեպքում էլ նա շարունակում է ստանալ իր աշխատանքի դիմաց տրվող վարձատրությունը կամ ուսման նպաստը: Քրեակատարողական հիմնարկից դուրս աշխատելու դեպքում դատապարտյալին հատկացվող արձակուրդային օրերը մնում են անփոփոխ: Բացի այդ, ԳԴՀ քրեակատարողական օրենսգիրքը նաև սահմանում է. «Եթե դատապարտյալն աշխատել է երկու ամիս շարունակ, նա կարող է իր սեփական դիմումի համաձայն մեկ աշխատանքային օր

վերցնել հանգստանալու համար», որը չի նվազեցնում իրեն հատկացված արձակուրդային օրերի քանակը:

Նման կարգավորումը բխում է դատապարտյալի շահերից, մասնավորապես՝ անչափահաս դատապարտյալի: Կարծում ենք, որ ՀՀ-ում նմանատիպ կարգավորումը ևս էականորեն դրական կանդրադառնա անչափահաս դատապարտյալների սոցալական վիճակի վրա:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է փոփոխության ենթարկել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 88 հոդվածը, որը անչափահաս դատապարտյալների նկատմամբ վարչակազմի կողմից բազմաթիվ կամայականությունների տեղիք կարող է տալ: Այդ հոդվածի 1-ին մասում առկա «իր համաձայնությամբ» բառակապակցությունը չի մեղմացնում տվյալ հոդվածի բովանդակությունը: Հոդվածի փոփոխությամբ պետք է բացառել չվարձատրվող աշխատանքներին անչափահաս դատապարտյալներին ներգրավելը: Անհրաժեշտ ենք համարում նաև անչափահաս դատապարտյալներին կրթական նպաստի վճարումը, ինչը կբարձրացնի անչափահաս դատապարտյալների շահագրգռությունը ուսման նկատմամբ:

**ЛИАНА МАРУКЯН – Образование и работа как лучший способ ресоциализации несовершеннолетних осуждённых.** – В статье подчёркивается, что организация учёбы несовершеннолетних осуждённых в уголовно-исполнительных учреждениях – это лучший способ их исправления, ресоциализации и интеграции в общество. Для ресоциализации необходима также работа в период отбывания наказания, что приносит опыт и определённые материальные средства. При этом приоритет в статье отдаётся именно образованию. Предлагается также закрепить размер вознаграждения за труд в статье 88 Уголовного-исполнительного кодекса РА, что предотвратит привлечение несовершеннолетних осуждённых к неоплачиваемой работе даже в случае их согласия.

**LIANA MARUKYAN - Education and Work as the Best Means for the Resocialization of Juvenile Prisoners.** –While stressing the importance of organizing education of juvenile convicts at detention facilities, as one of the most important measures of their correction and resocialization, work at the mentioned facilities also comes to be another necessary precondition for juveniles` integration into the society after their release from the places of incarceration. The work at the detention facilities gives them the opportunity to gain work experience and also provides with some financial means which they can use when are released.

While prioritizing education over work, the author proposes the stipulation of mandatory remuneration for juvenile convicts` work in the Article 88 of the Penitentiary Code of Armenia, which will safeguard the juveniles from the possibility of being engaged in non-remunerated works by the initiative of the administration, even when the juveniles` consent is present.